2022, № 1, 64-80 *Գիտական կյանք*
https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.1.064

«ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» (գիտական սեմինար ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում)

Սույն թվականի հունվարի 7-ին ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում տեղի ունեցավ **«ՀՀ անվտանգության հիմնախնդիրները»** խորագրով գիտական սեմինար, որը վարեց տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, ԵՊՀ սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հայկ Սարգսյանը:** Բանախոսն անդրադարձավ մի շարք հարցերի, ինչպիսիք են՝ ազգային անվտանգության կոորդինատների համակարգը, դրա միջգիտակարգային բնույթը, «կարմիր գծերը», անվտանգության, պետության կայացածության, սահմանադրականության փոխառնչությունները, անվտանգության մոդելավորման մեթոդաբանական որոշ մոտեցումներ, անվտանգության երաշխավորման ու գործարկման հայեցակարգային դրույթների վերաբերյալ առաջարկությունների մշակման տեխնոլոգիան:

Հրավիրյալների թվում էին գործադիր և օրենսդիր մարմինների անդամներ, ՀՀ ԿԲ ներկայացուցիչներ, հասարակական-քաղաքական գործիչներ, բիզնես ոլորտի մասնագետներ, Արցախից՝ մասնավորաբար Շուշիի տեխնոլոգիական համալսարանի, ինչպես նաև ԵՊՀ տարբեր ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ասպիրանտներ:

Զեկուցողը նշեց, որ սեմինարի քննարկման առարկան ՀՀ անվտանգության ռազմավարական և հայեցակարգային հիմնախնդիրներն են: Ըստ Հ.Սարգսյանի՝ «Սեմինարը գիտական դիսկուրսի հարթակ է լինելու, ձևավորվելու են խմբեր, որոնք կհանգեն քննարկվող **հիմնախնդրի մոդուլային լուծումների,** իսկ որ ամենակարևորն է, խնդիր է դրվելու **հասնել այդ լուծումների փոխգործակցությանը մեկ ամբողջության մեջ:** Հավակնոտ այս խորագիրը դարձնել գիտական սեմինարի առարկա, կարծում ենք՝ պահանջված է, և այն իրագործելու համար պետք է ունենալ գիտական և քաղաքացիական քաջություն»:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2016 թ.-ից գործում է Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը, որի սկզբնական կորիզը նույն ֆակուլտետում ձևավորված հետազոտողների խումբն է: Կենտրոնի գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններից կարելի է առանձնացնել հետևյալները.

➢ սահմանադրականության ախտորոշում և մակարդակի գնահատում,

➢ սահմանադրականության փոխառնչությունների բացահայտում տնտեսական և հասարակական տարբեր ոլորտների և դրսևորումների հետ,

➢ ինստիտուցիոնալ տնտեսագիտության և սահմանադրականության հիմնահարցերի մշակում,

➢ մարդու վարքագծի և սահմանադրականության փոխառնչությունների ուսումնասիրություններ,

➢ Big Data և Data Science մոտեցումների կիրառման հնարավորությունների ուսումնասիրություն ինստիտուցիոնալ տնտեսագիտության ոլորտում:

Ի թիվս վերոնշյալ ուղղությունների՝ կենտրոնը կատարում է նաև ՀՀ անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրություն: Ստորև ներկայացնում ենք Հայկ Սարգսյանի զեկուցման հիմնական դրույթները:

Անվտանգային համակարգի առաջնահերթությունները: ԽՍՀՄ-ի պարագայում Հայաստանը ապահովագրված էր արտաքին ոտնձգություններից: Առաջ նայելով նկատենք, որ հիմնախնդրի լուծման մեթոդաբանությունը չի բացառում, որ հետազոտությունների արդյունքում ՀՀ անվտանգության տեսանելիությունը խաղաղ գոյակցության համանմանությամբ գուցե մեկ այլ՝ առավել վստահություն ներշնչող համակարգի կազմում գտնվելու մասին եզրակացությունը լինի: Նման եզրակացության կարելի է հանգել, իհարկե, քաղաքագիտական, սոցիոլոգիական խորը վերլուծությունների արդյունքում: Այս դեպքում, վկայակոչելով սոցիոլոգիան, բնավ նկատի չունենք, ցավոք, ոչ եզակի այն դեպքերը, երբ առանց լուրջ հարցումների էլ պարզ են առաջին հայացքից վստահություն ներշնչող եզրահանգումները: ԽՍՀՄ-ի օրինակի վկայակոչումը հենվում է հետևյալ գաղափարի վրա. տարածաշրջանում երկրի անվտանգային համակարգը բխեցվում է հարաբերականորեն կայուն վիճակից (բացարձակ կայունը չկա. վկան Առաջին և Երկրորդ աշխարհամարտերը 20-րդ դարում), և անվտանգային պայմանները դիտարկվում են նման պայմաններում:

Արձանագրենք, որ երկրի պաշտպանունակությունը ներառում է ռազմականացման և դիվանագիտության բաղադրիչները անվտանգային օգտակարության իրենց դրսևորումներով:

Հանրային կյանքի անվտանգությունը (S) ձևավորող այդ բարիքները (ռազմականացումը (M) և դիվանագիտությունը (D)) արդի իրողությունների պայմաններում դուրս են զուտ տնտեսագիտության տիրույթից: Այստեղ պետության ու նրա ինստիտուտների կայացածությունն է դառնում երկրի անվտանգության, նրա բնակիչների պատշաճ պաշտպանվածության պրոդուկտ (ի դեմս M-ի և D-ի)՝ կրելով փոխարինման էֆեկտի հատկությունները: Ավելի լայն առումով՝ կրթվածությունը, ի-

բավագիտակցությունն ու պատշաճ կենսամակարդակն են թելադրում վարքագծային նորմեր, որոնք առավել նպատակահարմար կլինեն լավագույն որոշումների կայացման համար՝ լինի ընտրության որոշում, արժանապատվության պահպանում, բարեվարքություն, նվիրումի մոտիվացիա և այլն:

Որոշակի ճանապարհային քարտեզով (տե՛ս կենտրոնի կայքէջում՝ consteconom.ysu.am) երկրի զարգացման, նրա տնտեսությունը լճացումից դուրս բերելու գործում բացառիկ կարևորություն են ստանում մի շարք հիմնախնդիրներ: Նկատի ունենալով գիտակրթական համակարգի բացառիկ դերը բազում խնդիրների շարքում՝ առանձնացնենք մի քանիսը:

Առաջինը ՀՀ գիտության կառավարման բարեփոխման այնպիսի մոդելի ընտրությունն է, որը առավելագույնս կնպաստի տնտեսության կառուցվածքային և տեխնոլոգիական արդյունավետ բարելավումների իրականացմանը: Բարելավված կառուցվածքում (իսկ վերջինս դիտարկվում է որպես երկրի հեռանկարային զարգացման ծրագրի արդյունք) իր ուրույն տեղը պետք է ունենա ռազմաարդյունաբերական համալիրը (ՌԱՀ): Տնտեսության կառուցվածքում հիմնավորված ՌԱՀ-ի «կոնֆիգուրացիայի» ձևավորման մեխանիզմը պատկերվում է հետևյալ համալուծ օղակների փոխգործակցմամբ.

✓ ռազմական գերատեսչության պետպատվերով նախանշվում է առաջիկա տարիների համար սպառազինությունների պահանջարկը՝ հնարավոր պատերազմական իրավիճակներում պաշտպանական ու հարձակողական զինանոցների արդիականացման ու համալրման հաշվառմամբ՝ «ռազմական տնտեսության» դրույթներին համապատասխան,

✓ պետական պատվերը «իջեցվում է» շահառու գիտահետազոտական (չի բացառվում նաև մասնավոր հատվածի) կազմակերպություններին՝ համապատասխան նկարագրիչների՝ ռազմական «պրոդուկտի» բաղադրիչների կազմի ու ծավալների մասին տեղեկատվությամբ:

Երկրորդ հիմնախնդիրը ՀՀ գիտության արդյունավետ կառավարման խնդիրների ամբողջական և համապարփակ ցանկի բացահայտումն է: Վերջինս ինքնին բարդ խնդիր է, որը ներկայումս բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ առաջադրվում է հետազոտական կազմակերպություններին ու խմբերին: Այդ միջոցների առաջանցիկ աճի տեմպերը, կարծում ենք, պետք է ամրագրվեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մինչև 15-20 տարիների հեռանկարային ու միջնաժամկետ ծրագրերում, նորմատիվային փաստաթղթերում:

Երրորդ հիմնախնդիրը գիտությանը հատկացվող միջոցների բաշխման չափանիշները չհստակեցնելն է, որը գիտության զարգացման հայեցակարգերում ու օրենսդրական-նորմատիվային տարբեր փաստաթղթերում ստեղծել է ինստիտուցիոնալ լուրջ ճեղքվածք: Այ-

սուհանդերձ, միջոցների արդարացի բաշխումը խզելու հարցը կարող է մեղմվել, եթե «ինչպես բաշխելը» ստորադասվի այն կանխարգելող հետևյալ խնդիրների լուծմանը.

✓ Ճշգրտվեն անվտանգային խնդիրների լուծման հնարավորությունները տարածաշրջանում պատերազմական գործողություններում մեկուսի և դաշնակցային եղանակներով դիմակայելու հարցում: Այս խնդրի լուծումը ռազմաքաղաքական համատեքստում է:

✓ Ճշգրտվեն ՀՀ-ում իրականացվելիք հետազոտություններից կառավարության սպասելիքները (սպառնալիքները կանխելու արագ արձագանքման համակարգեր և այլն):

✓ Սահմանվեն գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները և ծավալները (հիմնարար և կիրառական հատվածներով՝ ըստ ոլորտների հնարավոր առավելագույն տարբերակմամբ):

✓ Սահմանվեն հետազոտությունների վերջնարդյունքները՝ ժամկետների նախանշմամբ:

Ինքնին բարդ խնդիր է գիտական արդյունքների շահառուների ցանկի կազմավորումը, որի ձևավորումը կարող է ներկայացվել հայտատուների և պատվիրատուի նախաձեռնության զուգորդմամբ:

Հետազոտությունների ցանկի ընտրության, կառուցակարգերի, ծավալների և այլ բնութագրերի ձևավորման հնարավոր դրվագներից մեկը փորձենք տեսնել վերը դիտարկված ՌԱՀ-ի օրինակով: Որոշումների կայացման նկարագրված սխեմայով առաջնորդվելիս, որքան էլ պարադոքսալ ինչի, գիտական հիմնավորվածությունը կարող է հանգեցնել այնպիսի եզրակացության, որ ՌԱՀ-ի լայնածավալ գործարկումը նպատակահարմար չհամարվի, որ անհրաժեշտ սպառազինությունները (հնարավոր է դրանց մի մասը) գնվեն պետական պատվերով՝ միջոցներն ուղղելով առավել մրցունակ ճյուղերի զարգացմանը, և հավելյալ եկամուտներով համալրել ՌԱՀ-ին հատկացվելիք ֆինանսական միջոցները: Չի բացառվում նաև, որ գիտական հիմնավորվածությամբ կարող է հաստատվել այն տեսակետը, ըստ որի՝ ՌԱՀ-ը կարող է ծավալվել և դառնալ ՀՆԱ-ի արտահանման զգալի բաղադրիչ:

ՀՀ ռազմական անվտանգության գիտական ապահովման որոշ խնդիրներ: Արցախյան 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած իրադարձություններից հետո հատկապես օրախնդիր է դարձել երկրի անվտանգության (մասնավորապես՝ ռազմական անվտանգության) ապահովումը: Ռազմական անվտանգությունը սահմանվում է որպես ազգային անվտանգության բաղադրիչ, որն ապահովվում է զինված ուժերի և հասարակության այն հաստատությունների վիճակով, որոնց շնորհիվ պետության պաշտպանական հզորությունը պահպանվում է այն անհրաժեշտ մակարդակում, որի դեպքում այլ պետությունների հետ հաստատվում են բարենպաստ հարաբերություններ, և բացառվում է առ-

ճակատումն ուժի կիրառմամբ[1]: Ակնհայտ է, որ ռազմական անվտանգության ապահովման նպատակով պետությունը պետք է երաշխավորի դրա տարբեր ենթահամակարգերի (պաշտպանություն, դիվանագիտություն, կիբեռանվտանգություն, սահմանամերձ տարածքների համաչափ զարգացում և այլն) ներդաշնակ փոխգործակցությունը: Մասնավորապես, մեր կարծիքով, գիտական լուրջ խնդիր են ռազմական անվտանգության համար ռազմական-պաշտպանական և դիվանագիտական գործոնների հստակեցումը, գնահատումն ու դրանց միաժամանակյա ներդաշնակ փոխգործակցության ապահովումն այն իմաստով, որ այդ երկու գործոնները ռազմական անվտանգության համար փոխադարձաբար փոխարինելի են (որոշ իմաստով նաև՝ լրացնող):

Հիմնախնդրի ուսումնասիրման համար մաթեմատիկական մոդելավորման կիրառման սկզբունքները: Ռազմական-պաշտպանական և դիվանագիտական գործոններից յուրաքանչյուրը բնութագրող ցուցանիշների (ինչպես քանակական, այնպես էլ որակական) սահմանումը, դրանց գնահատումը և պատճառահետևանքային կապերի հստակեցումը կարող են պարզեցված սխեմայով ներկայացվել երկրի ազգային անվտանգության համակարգում.

Գծապատկեր 1

Երկրի ազգային անվտանգության համակարգի պարզագույն սխեման



Դիցուք՝ «Ռազմական անվտանգություն», «Ռազմական պաշտպանություն» և «Դիվանագիտություն» ենթահամակարգերը t-րդ ժամանակահատվածի համար ներկայացվում են համապատասխանաբար $S(s_1, s_2, ..., s_n)$, $M(m_1, m_2, ..., m_k)$ և $D(d_1, d_2, ..., d_l)$ բնութագրիչ վեկտորներով: Այդ դեպքում կարելի է ասել, որ S-ը ֆունկցիա է M-ից և D-ից՝

$$S(t)=f[M(t), D(t)]:$$

Ընդ որում, հետագա մաթեմատիկական ձևափոխությունների տեսանկյունից նպատակահարմար է՝ M և D վեկտորների ենթագործոնկոորդինատներն ընտրվեն այնպես, որ դրանք աճող ֆունկցիաներ լի-

[1] Տե՛ս https://hy.wiktionary.org/wiki/%D5%A1%D5%B6%D5%BE%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

նեն ըստ այդ կոորդինատներից յուրաքանչյուրի: Հարկ է նշել, որ M-ը և D-ն առանձին իրավիճակներում կարող են հանդես գալ որպես միմյանց և՛ փոխարինող, և՛ լրացնող գործոններ: Առավել բնական է ենթադրությունը, որ դրանք կարող են դառնալ փոխարինող այդ երկու գործոններից յուրաքանչյուրի որոշակի նվազագույն թույլատրելի մակարդակի ապահովումից հետո միայն, իսկ մինչ այդ մակարդակների ապահովումը միանշանակ փոխադարձաբար լրացնող են: Անվտանգության մակարդակը գնահատելու, համեմատելու և «կառավարելու» առումով նպատակահարմար է այն դարձնել չափելի: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել ռազմական անվտանգության օգտակարության ֆունկցիա՝ կախված «Ռազմական պաշտպանություն» և «Դիվանագիտությունն» ենթահամակարգերի բնութագրիչ վեկտորներից՝

$U_{S(t)}=U[M(t), D(t)]$:

Վերոհիշալ օգտակարության ֆունկցիային բնորոշ են հետևյալ հատկությունները.

1. օգտակարության ֆունկցիան աճող է՝ $(\frac{\partial U}{\partial M} > 0, \frac{\partial U}{\partial D} > 0)$

2. $U[M'(t),D'(t)]=U[M'(t),D(t)]=U[M'(t),D'(t)]=0$, բոլոր $M'(t)<\min M(t)$ և $D'(t)<\min D(t)$ արժեքների համար,

3. օգտակարության ֆունկցիան դեպի վեր ուռուցիկ է կենտրոնի նկատմամբ՝ $(\frac{\partial^2 U}{\partial M^2} > 0, \frac{\partial^2 U}{\partial D^2} > 0)$:

Տնտեսագիտության հայտնի տեսությունների համանմանությամբ կարելի է ձևակերպել որոշ հասկացություններ, որոնց թվում են *անտարբերության կորերի քարտեզը*՝



Անտարբերության կորը բաղկացած է M-ի և D-ի այն բոլոր համակցություններից, որոնք ապահովում են ռազմական անվտանգության նույն մակարդակը: Ըստ M-ի (D-ի) *սահմանային օգտակարությունը* ցույց կտա, թե որքանով կաճի ռազմական անվտանգության մակարդակը, եթե M-ը (D-ն) աճի լրացուցիչ մեկ միավորով՝

$$MU_M = \frac{\partial U}{\partial M} > 0, MU_D = \frac{\partial U}{\partial D} > 0 :$$

Դիտարկվող հարցադրումների տեսանկյունից կարևոր իմաստ է ստանում նաև *«ռազմական պաշտպանությունը դիվանագիտությամբ*

փոխարինելու» սահմանային նորմը՝ MRS_{MD}-ն, որը ցույց կտա, թե քանի միավորով ավել M պետք է օգտագործվի D-ն մեկ միավորով պակասեցնելու դեպքում, որպեսզի օգտակարությունը մնա անփոփոխ՝

$$MRSMD = -\frac{dM}{dD} > 0:$$

Կարևոր է նաև «Ռազմական անվտանգություն» ենթահամակարգի վրա օգտակարության ֆունկցիայի M և D փոփոխականների-վեկտորների յուրաքանչյուր կոորդինատի (ենթագործոնի) տոկոսային ազդեցության գնահատումը: Այդ նպատակով կարելի է ձևակերպել **օգտակարության ֆունկցիայի *առաձգականություն*** հասկացությունը, որը ցույց կտա տվյալ ենթագործոնի լրացուցիչ մեկ տոկոսով փոփոխության օգտակարության վրա ազդեցության տոկոսային չափը՝

$$\varepsilon_{Um_j} = \frac{\partial U}{\partial m_j} \times \frac{m_j}{U}, \quad j=1,k, \qquad \varepsilon_{Ud_h} = \frac{\partial U}{\partial d_h} \times \frac{d_h}{U}, \quad h=1,l:$$

Եթե M-ը և D-ն դիտարկենք որպես փոխադարձաբար փոխարինելի գործոններ, ապա կարելի է ձևակերպել այսպես կոչված *«եկամտի» և «փոխարինման» էֆեկտներ* հասկացությունները: Այդ նպատակով նախ ձևակերպենք քննարկվող հիմնախնդրի համար *օգտակարության մաքսիմալացման խնդիրը:*

Դիցուք, $P_M(t_r)$-ը և $P_D(t_r)$-ը համապատասխանաբար M-ի և D-ի գների (ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ծախքերի) վեկտորներն են, իսկ $I(t_r)$-ն՝ այն առավելագույն ռեսուրսային պոտենցիալը, որը պետությունը կարող է ուղղել երկրի ռազմական անվտանգության ապահովմանը t_r-րդ ժամանակահատվածում: Այդ դեպքում օգտակարության մաքսիմալացման պարզագույն խնդիրը կներկայացվի հետևյալ կերպ՝

$$U(t_r) \to \max P_M(t_r)\, M(t_r) + P_D(t_r) D(t_r) \le I(t_r)$$
$$M(t_r) \ge \min M(t_r),\ D(t_r) \ge \min D(t_r):$$

Դիցուք, տվյալ ժամանակահատվածի համար D-ի ընդհանրացված (ագրեգացված) «գինն» աճում է: Արդյունքում, այլ հավասար պայմաններում կնվազի երկրի ռազմական անվտանգությունը: Այդ նվազումը պայմանավորված է երկու «էֆեկտներով»՝ փոխարինման և եկամտի: Փոխարինման էֆեկտն այս դեպքում գործոնի գնի փոփոխության հետևանքով օգտակարության փոփոխությանն ուղղված այն ազդեցությունն է, որը պայմանավորված է տվյալ գործոնն այլ գործոնով փոխարինելու ձգտմամբ: Եկամտի էֆեկտը գործոնի գնի փոփոխության հետևանքով օգտակարության փոփոխությանն ուղղված այն ազդեցությունն է, որը պայմանավորված է պետության՝ երկրի ռազմական անվտանգությանն ուղղվելու համար նախատեսված առավելագույն ռեսուրսային պոտենցիալի իրական մակարդակի նվազմամբ:



Այնուհետև զեկուցողը պատասխանեց մասնակիցների, մասնավորապես՝ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանող Միհրան Սիսակյանի, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, դոցենտ Կառլեն Խաչատրյանի, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ Գագիկ Եգանյանի, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանի, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր Սամսոն Դավոյանի, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր Ամալյա Սարիբեկյանի, «Անտարես» հրատարակչության տնօրեն Արմեն Մարտիրոսյանի հարցերին:

Ելույթներ: Հարց ու պատասխանից հետո եղան ելույթներ, որոնցից հատվածներ ներկայացնում ենք ստորև:

Միհր Շահգելդյան, *ՀԱՊԿ և ԵՎՐԱԶԵՍ ակադեմիայի ռեկտոր,քաղաքական գիտությունների թեկնածու*

-Ողջունում եմ այս քննարկումը, քանի որ ազգային անվտանգության և պաշտպանության հիմնահարցն այսօր գերակա է մեր ժողովրդի և պետության համար: Տվյալ ոլորտը խիստ բարդ է և ընդգրկուն: Հակիրճ լինելու համար ես կցանկանայի անդրադառնալ միայն մի քանի հիմնախնդիրների, որոնց լուծումը համակարգային նշանակության է:

1.Ազգային անվտանգություն հասկացության ծավալ: Երբեմն ազգային անվտանգության հասկացության ծավալն անհարկի ընդլայնվում է՝ ներառելով թերևս հասարակական կյանքի բոլոր ոլորտները: 2007 թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մշակման ընթացքում նախնական տարբերակը, որը պրոֆեսիոնալ բարձր մակարդակով և կոլեկտիվ աշխատանքի արդյունք էր, ներառում էր ազգային շահեր կատեգորիան: Որքան ես եմ տեղյակ, այն այնուհետ ներկայացվեց քննարկման աշխարհի ուժային կենտրոնների մի շարք «ուղեղային ֆաբրիկաներում», և ետ ստացանք արդեն առանց ազգային շահերի ձևակերպման տարբերակը, թեպետ մեծ տերությունների ռազմավարություններում այդ հասկացությունն առկա է: Աշխարհում կա խորությամբ մշակված մեթոդաբանական բազմազանություն: Բայց մենք պետք է վերցնենք այն, ինչ մեզ է անհրաժեշտ: Յուրաքանչյուր երկրի անվտանգային խնդիրները յուրահատուկ են:

2. Անվտանգային ոլորտների աստիճանակարգումը: Համոզված եմ, որ մեզ համար ռազմական անվտանգությունն առաջնային պետք է լինի: Սրանով պետք է պայմանավորվի նաև պետական քաղաքականության մշակման գործընթացը: Ժողովրդավարությունը, ազատությունները և փոխկապակցված այլ խնդիրներն իհարկե խիստ կարևոր են, բայց առաջնայինը մարդու կյանքի իրավունքի պաշտպանությունն է: Եթե մարդիկ զոհվում են թշնամու ագրեսիայի ընթացքում, ապա հարց է առաջանում՝ իսկ ում ազատություններն են պաշտպանվում:

3. Անվտանգային մշակույթի հիմնարար դերը անվտանգային քաղաքականության կերտման ընթացքում: Վաղուց արդեն մշակվել է «անվտանգության մշակույթ» հասկացությունը, և եթե այն Հայաստանում նույնիսկ հազվադեպ կիրառվում է, ապա մեխանիզմները, վերլուծության մեթոդները անհայտ են: Մշակույթը լայն առումով ընդհանրապես բազիսային նշանակություն ունի հանրույթների ինքնակազմակերպման համար, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ազգային անվտանգությունը, պատերազմն ու խաղաղությունը:

4. Դիլետանտիզմի առկայությունը ազգային անվտանգության տարբեր ոլորտներում: Սա վերաբերում է և՛ մասնագետներին, և՛ քաղաքական ու վարչական որոշում ընդունողներին: Այս ոլորտում դիլետանտիզմը կարող է մահացու լինել: Եվ մենք՝ որպես գիտնականներ, պետք է պայքարենք դիլետանտական մոտեցումների դեմ: Ազգային անվտանգության և, հետևաբար, պատերազմի և խաղաղության ոլորտում, պետության պաշտպանության, արտակարգ իրավիճակների, դրանց կանխարգելման ոլորտում դիլետանտիզմը ամենամեծ վտանգն է, քանի որ երբ մարդուն թվում է՝ ինքը ամեն ինչ գիտի, նա կարծիքներ չի հարցնում, սխալ որոշումներ է ընդունում, ոչ ճիշտ հարցադրումներ է կատարում, ինչն այդ ոլորտին չի վերաբերում, ժամանակ և փող է ծախսվում, բայց խնդիրը չի լուծվում: Արդյունքում դա կարող է արժենալ մարդկանց առողջություն և կյանքեր:

5. Վերջին խնդիրը, որը կցանկանայի շեշտել, ողջունելով նաև այսօրվա քննարկումը, *դիսկուրսի անհրաժեշտությունն է:* Անվտանգության ոլորտում անհրաժեշտ է դիսկուրս: Գիտական, մասնագիտական քննարկումները խիստ անհրաժեշտ են, և պետք է դիսկուրսը պահել: Կոչ եմ անում շարունակել քննարկումներն այս ոլորտում: Սա այնքան համալիր երևույթ է, որ տարբեր մասնագետների կարծիքների համադրությամբ է հնարավոր ստեղծել իրապես գործուն համակարգ:

Տիգրան Թորոսյան, *Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

-Կարծում եմ՝ պարոն Սարգսյանը մի կարևոր քննարկումների շարք է նախաձեռնել, և այդ առումով ուզում եմ ողջունել այն: Մի քանի

նկատառում ներկայացնեմ։ Նախ, անվտանգությունը իրականում ավելի շատ բաղադրիչներ ունի, և դրանցից յուրաքանչյուրն ունի բացառիկ նշանակություն։ Անվտանգությունը շատ համընդգրկուն գաղափար է, և իսկապես համաձայն եմ պարոն Շահգելդյանի և պարոն Սարգսյանի հետ, կան տարբեր ձևակերպումներ, որոնք տարբեր ձևով են ընկալվում։ Այդ առումով, թերևս, շատ կարևոր էր այդ սխեմայի ներկայացումը, որ հստակ լինի, թե ինչի մասին է խոսքը։ Եվ երբ ընդհանուր ձևակերպում ունենք, նշանակում է, որ փորձ է արվում ամբողջացնել բազմաթիվ հիմնախնդիրներ, ինչը նաև վերնագրից է երևում, բայց միաժամանակ չի նշանակում, որ ամեն ինչ մնում է մի կողմ, և առաջ է գալիս անվտանգության խնդիրը։ Ճիշտ հակառակը՝ ընդհանուր գնահատումներով, այդ թվում՝ նաև քանակական, մենք կարող ենք պատկերացում ունենալ իրավիճակի մասին, դրա զարգացման միտումների մասին, հետընթացի մասին և այլն։ Բայց դրանով մենք լուծումների ի վերջո չենք հանգի։ Ես երկու համակարգի մասին ասեմ, որոնց մասին խոսք չի եղել այսօր, բայց որոնք ունեն բացառիկ, համակարգաստեղծ նշանակություն ցանկացած պետության համար։ Քաղաքական համակարգի կայացածության խնդիրը. քաղաքական համակարգն է, որ որոշումներ է ընդունում ցանկացած կարևոր հարցի վերաբերյալ յուրաքանչյուր պետությունում։ Եվ եթե քաղաքական համակարգը կայացած չեղավ, այդ որոշումները չեն համապատասխանելու առկա խնդիրներին։ Հետևաբար նաև լուծումները չեն լինելու համարժեք։ Իսկ քաղաքական համակարգի կայացածությունն ուղղակիորեն կապված է կուսակցական համակարգի կայացածության հետ։ Դժբախտաբար, Հայաստանում կուսակցությունների մեծ մասը պատկերացում էլ չունի՝ ինչ է նշանակում կուսակցություն, ինչ առաքելություն ունեն, գործունեության ինչ մեխանիզմներ պետք է ունենան և այլն։ Սա բացառիկ նշանակություն ունի, և դա է պատճառը, որ ոչ միայն Հայաստանում, այլև հետխորհրդային տարածքի այլ երկրներում՝ Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում, ժամանակակից, ինստիտուցիոնալացված կուսակցություններ գոյություն չունեն։ Այդ առումով անգամ շատ լուրջ խնդիրներ ունեն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները։ Բայց կուսակցությունները, մասնակցելով ընտրություններին, գալիս են խորհրդարան, ձևավորում են կառավարություն, ձևավորում են ամբողջ քաղաքական համակարգը։ Եվ իրենց որակներից է կախված, թե ձևավորած համակարգը ինչ որակ կունենա։ Սա առանցքային խնդիր է, և, ցավոք, դրա կարևորությունը Հայաստանում լավ չի գիտակցվում։ Արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցեցին 25 քաղաքական ուժեր, ընդ որում՝ դրանցից մի քանիսում մի շարք կուսակցություններ էին միավորված։ Ցավոք, պատկերը չափազանց տխուր է։ Այդ ուժերից միայն մի քանիսն են ինչ-որ չափով նման կուսակցությունների։ Ժամանակի սղության պատճառով այս խնդրին ար-

ձագանքը սահմանափակեմ, բայց այն կարոտ է շատ լուրջ ուսումնասիրությունների: Իհարկե կարևոր է ռազմական և դիվանագիտական բաղադրիչների նշված կապը, բայց մի հարց եմ ուզում տալ՝ մի՞թե ռազմական և դիվանագիտական բաղադրիչներն առանց գիտակրթական համակարգի կայացածության կարող են բավարար մակարդակ ունենալ: Կամ՝ սահմանադրական փոփոխությունների հարցը: Եթե կատարյալ սահմանադրություն էլ գրվի, վստահ եղեք, առանց լիարժեք կիրառման ոչ մի արդյունք չի լինի: Առանց համապատասխան մասնագետների, առանց կրթության ու գիտության համապատասխան մակարդակի չի կարող որևէ տեղ պետությունը կայանալ: Սա անվտանգության խնդրի հետ կապված ունի բացառիկ նշանակություն: Չունենալով լավ մասնագետներ, լավ շրջանավարտներ, լավ գիտնականներ՝ չենք կարող կառուցել այն պետությունը, որի մասին բոլորս երազում ենք: Կրթության և գիտության ոլորտներն ունեն համակարգաստեղծ նշանակություն մյուս բոլոր ոլորտների համար: Բայց սա բավարար չափով չի գիտակցվում: Հայտարարվում են ինչ-որ մրցույթներ՝ ինչ-որ ծրագրեր ներկայացնելու համար: Ո՞վ է դա գնահատելու, ինչպե՞ս է դա գնահատվելու, ինչպե՞ս են այդ ծրագրերը կյանքի կոչվելու: Ի վերջո, կրթությունն ու գիտությունը ինքնանպատակ չեն: Սա հենց երկրի հիմնական խնդիրն է: Կներեք, բայց ես չեմ հավատում, որ վիրավորական աշխատավարձ տալով գիտնականին՝ հնարավոր է որևէ լավ բանի հասնել: Մեր երկիրը, իհարկե, մեծ գումարներ չունի, ոչ էլ, ինչպես ոմանք են տարիներ շարունակ պնդում, առաջարկում եմ պետական բյուջեի 5 կամ 7 տոկոսը հատկացնել գիտությանը: Եթե դուք չունեցաք իրական գաղափար, ծրագիր հիմնախնդիրը լուծելու համար, դուք չեք կարողանա այն լուծել, ինչքան էլ փող հատկացնեք: Հայտարարվել է, որ հատկացումներն ավելացել են: Բայց ո՞ր գաղափարների համար, կամ ի՞նչ սկզբունքներով օգտագործելու համար, հայտնի չէ: Հակառակը, փակվում են ծրագրեր, որոնք ոչ մեծ ներդրումներով տվել են աննախադեպ արդյունքներ, հատկացումներ են արվում կասկածելի ծագման, զուտ քարոզչական նպատակներ հետապնդող «նախագծերի»:

Կարինե Մինասյան, *Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախկին անդամ (նախարար)*

-Ինչո՞ւ է Հայաստանում անվտանգության խնդիրն այդքան արդիական դարձել՝ պահանջելով միջգիտակարգային դիսկուրսում մտավոր էլիտայի անդրադարձը: Պատասխանը բավականին պարզ է՝ քանի որ մեր երկրում խախտվել է հանրային պայմանագիրը: Վերջին տարիների իրադարձությունները, որոնցից գլխավորը 44-օրյա պատերազմում պարտությունն էր, մեր հայրենակիցների մահը և 30 տարի մեր երկրի վերահսկողության տակ գտնվող տարածքների կորուստը համոզիչ ապացույցն են այն բանի, որ պետությունն ի վիճակի չէ իրականացնելու իր հիմնական գործառույթը՝ իր քաղաքացիների անվտանգության ա-

պահովումը: Մենք տեսնում ենք, թե ինչպես է մեր պետությունն աստիճանաբար վերածվում Թոմաս Հոբսի «Լևիաթանի», և էլիտաների մոտ առաջանում է բնական հարց, թե ինչ ջանքեր և ինչ առաջնահերթ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել քաղաքացիների, հասարակության և պետության կենսական շահերը ներքին և արտաքին սպառնալիքներից պաշտպանելու համար: Նշված խնդրի լուծման հիմնական մոտեցումների ձևավորման համար տեսական հիմք կարող է լինել Բարրի Բուզանի գաղափարների շուրջ ձևավորված՝ Կոպենհագենի դպրոցի առաջարկած անվտանգայնացման տեսությունը: Առաջարկվող մոտեցման էությունն այն է, որ էլիտաները պետք է ձևակերպեն այն սպառնալիքները, որոնք առաջնային են կոնկրետ օբյեկտի համար կոնկրետ ժամանակահատվածում, իսկ մեր դեպքում խոսքը պետության և հասարակության մասին է, և դրանք անհրաժեշտ է անվտանգայնացնել հանրային լայն դիսկուրսի միջոցով՝ այդ կերպ գործողությունների մղելով մարդկանց այն խմբերը, որոնք կարող են որոշակի փոփոխություններ իրականացնել:

Անշուշտ, ակադեմիական էլիտան այս մոտեցման դեպքում կարող է կարևորագույն դեր խաղալ մեր հասարակության առջև ծառացած սպառնալիքների ձևակերպման գործում:

Ի՞նչ սպառնալիքների մասին է խոսքը:

Սահմանից ստացված տեղեկությունները, Հայաստանից և Արցախից քաղաքացիների արտահոսքի անընդհատ աճող տեմպերը վկայությունն են այն բանի, որ հիմնական սպառնալիքը հարևան Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ագրեսիվ ռազմական գործողությունների արտաքին սպառնալիքն է, ֆիզիկական ոչնչացման սպառնալիքն է և իշխանությունների անկարողությունը՝ ապահովելու անվտանգություն, պաշտպանելու ազգային սահմանները և հատկապես Արցախի մեր համահայրենակիցների կյանքը:

Տեղի ունեցող գլոբալ տեղաշարժերը, պայմանավորված տեխնոլոգիական կարգի փոփոխությամբ, սպառնալիք են Հայաստանի տնտեսության մրցունակության համար: Հայաստանի վիրտուալ շուկաներում թվային ինքնիշխանության ձևավորման, տվյալների, այդ թվում՝ նաև անձնական տվյալների, կուտակման և օգտագործման քաղաքականության բացակայությունը, տեղեկատվական էքսպանսիային դիմակայելու պատրաստակամության բացակայությունը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության հետագա պրիմիտիվացմանը՝ կապված բնական ռեսուրսների անվերահսկելի շահագործման հետ, անդառնալի վնաս հասցնելով ապագա սերունդներին:

Ազգային ինքնության կորուստը, ներկայիս քաղաքականության արդյունքում գլոբալիստների կողմից առաջարկվող կեղծ արժեքների պարտադրումը, պատմության վերաշարադրումը, Հայ եկեղեցու՝ որպես ազգային ինքնությունը պահպանող հիմնական ինստիտուտի գե-

րակայությունից հրաժարումը, նախորդ սերունդների ձեռքբերումների արժեզրկումը կարող են հանգեցնել հայ ազգի ինստիտուցիոնալ հիմքի արմատական, անշրջելի վերափոխումների։

Սպառնալիքների այս ցանկը կարելի է շարունակել, հնարավոր է՝ դահլիճում նստածներից յուրաքանչյուրն ունի իր ցուցակը։ Մեր խնդիրը, ինչպես նշվեց վերևում, այն սպառնալիքների ձևակերպումն է, որոնք մենք իսկապես գերակա ենք համարում, և հնարավորինս շատ մարդկանց ներգրավումը դրանց քննարկման և իրական լուծումների մշակման մեջ։

Գևորգ Դանիելյան, *ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

-Անվտանգության հիմնախնդիրը մեր երկրում ցավոք դարձել է աննախադեպ հրատապ, որի համատեքստում առանցքային նշանակություն ունի հատկապես իրավական անվտանգությունը։ Մեզանում մշտապես շեշտվում է, որ լավ օրենքներ են ընդունվում, բայց դրանք մնում են թղթի վրա։ Հավատացեք, որ եթե այդ օրենքները լավը լինեին, համահունչ լինեին իրական պահանջներին, թղթի վրա չէին մնա, թեպետ օրենքը երբեք թղթի վրա չի մնում, անորակ օրենքը ևս հետք է թողնում, բայց արդեն՝ բացասական։ Եթե օրենք եք ընդունում, այդ թվում՝ անվտանգության առնչությամբ, ուրեմն չպետք է բավարարվեք գեղեցիկ շարադրանքով, այլ պետք է համալիր ուսումնասիրեք այդ ոլորտը՝ պարզեք, թե իրականում ինչ նախադրյալներ կան, ինչ ներուժ ունենք, ինչպիսին է իրավական մշակույթը և բազում այլ գործոններ։ Եթե դա հաշվի չեք առնում, ապա ի սկզբանե մատնվում եք անհաջողության։ Մենք այդպես էլ չենք կամենում ընկալել, որ եթե մի հաջողված գաղափար ունենք, ապա դրան հասնելու համար փուլեր են պետք, որոնցից յուրաքանչյուրին հասնում են նախապատրաստական լրջագույն աշխատանքի միջոցով. ոչ մի պետություն այդպիսի գաղափարների միանգամից չի հասել։ Կարելի է այդ փուլերը մասամբ արագացնել, բայց շրջանցել հնարավոր չէ։

Հակիրճ իրավական հիմքերի մասին։ Ինչպես նկատել եք՝ իշխանությունները փորձում են ազգային անվտանգության հարցադրումները հեռու պահել հանրային քննարկումներից։ Առաջին այդպիսի փաստաթուղթը Հանրապետության նախագահի կողմից է հաստատվել 2007 թ.՝ Սահմանադրության 49-րդ հոդվածի հիման վրա, գործել է երկար տարիներ։ Այնուհետև 2020 թ. որոշվեց, որ ազգային անվտանգության ռազմավարությունը պետք է հաստատի Անվտանգության խորհուրդը, որը Սահմանադրությամբ բացարձակապես օժտված չէ այդպիսի իրավասությամբ։ Ստացվում է, որ գործադիր մարմնի կողմից հաստատված իրավական ակտով պարտավոր է ղեկավարվել նաև Ազգային ժողովը, ինչն արդեն անհեթեթություն է։ Ես չեմ էլ անդրադառնում բո-

վանդակությանը, որովհետև մեծ հաշվով այն ընդունելի չէ և հագեցած է սոսկ վերացական, հրապարակախոսական դրույթներով: Փաստաթուղթը և գործնական կյանքը միմյանց հետ որևէ աղերս չունեն:

Այսպիսի հստակ կողմնորոշիչների բացակայությունն էլ հենց հանգեցնում է անհեռանկար, արտաքին ու ներքին խիստ վտանգավոր քաղաքականության: Անընդհատ խոսում ենք բարեկամական հարաբերությունների մասին, բայց չի կարելի անտեսել, որ Սահմանադրության 13-րդ հոդվածը պարտավորեցնում է, որ արտաքին քաղաքականության հիմքում դրվի ոչ միայն բարիդրացիության, այլև փոխշահավետության սկզբունքը: Խիստ անհանգստացնում են դաշնակիցներ կորցնելուն հանգեցնող քայլերը, որոնց շարքում կհիշատակեի 2020 թ. հունիսի 10-ին Կրոնական ազատության միջազգային դաշինքին միանալը, որով թիրախավորվել էին հատկապես Իրանը, Իրաքը, Չինաստանը և Հնդկաստանը: Ընդ որում, այդ երկրներում Հայ եկեղեցու թեմերն ավելի լայն արտոնություններ ունեն, քան Հայաստանում:

Վերջապես, խիստ անհանգստացնող է ներկա փուլում միջազգային բանակցություններ վարելու և պայմանագրեր կնքելու պրակտիկան, երբ բացահայտորեն անտեսվում են Սահմանադրության պահանջները:

Խաչիկ Գալստյան, *ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր, քաղաքագիտության դոկտոր*

-Ես ինձ համար մի քանի կարևոր արձանագրումներ արեցի: Գոնե այս դահլիճում հավաքվածների համար անվտանգության պարադիգմը առաջնային է: Մենք գիտակցում ենք, որ անվտանգության դեֆիցիտը խորապես մտահոգիչ է և կանխազգում ենք, որ այն ազդում է հասարակության այնվտանգության իմունիտետի վրա: Ես արժևորում եմ պարոն Սարգսյանի մեծ աշխատանքը, որ մեկ հարկի տակ հավաքել է հասարակական գիտությունների ներկայացուցիչների, ովքեր հստակ ֆիքսեցին, որ անվտանգության հիմնախնդիրը միջգիտակարգային բնույթ ունի: Անվտանգության դեֆիցիտը ե՞րբ զգացինք: Երբ 2020 թ. խաթարվեցին Հայաստանի ու Արցախի անվտանգային համակարգերը: Այսօր ցավով պետք է արձանագրեմ, որ Հայաստանի Հանրապետությունը Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը չէ, ՀՀ-ն նույնիսկ իր անվտանգության երաշխավորը չէ: Սա ինձ համար ցավալի իրողություն է: Մենք այստեղ հավաքվել ենք «ուղեղներով», այսպես կոչված ինտելեկտուալ էլիտայի ներկայացուցիչներով, գիտակցում ենք քննարկվող հարցի կարևորությունը, բայց հերթական անգամ պետք է արձանագրեմ, որ որոշումներ ընդունում է քաղաքական էլիտան, իսկ կառավարող էլիտայի համար անվտանգության պարադիգմը առաջնային օրակարգային հարց չէ: Ի՞նչ անել հարցադրման առնչությամբ. առաջին հերթին պետք է այնպես անենք, որ անվտանգության պահանջմունքը հայ հասարակության համար դառնա առաջնային բավա-

բարման առարկա։ Անվտանգության տարբեր բաղադրիչներից ես կցանկանայի նշել նաև հոգևոր բաղադրիչը։ Պարոն Սարգսյանը խոսում էր չափումներից, չափման գործիքներից, ես՝ որպես քաղաքագետ, պետք է հակադարձեմ։ Մենք գործ ունենք անվտանգություն սպառող մարդու հետ, իսկ մարդը չափումների չի ենթարկվում։ Մենք գործ ունենք հայի տեսակի հետ, հայը «մեգաէակ» է և այդ տեսանկյունից, որպես «մեգաէակ», չափումների չի ենթարկվում։ Հայաստանում ապրող հայը «մետաարարած» է, և, որպես «մետաարարած», էլի չափումների չի ենթարկվում։ Պարոն Սարգսյանի մտքերի առնչությամբ պետք է արձանագրեմ, որ պատերազմից անցել է 1 տարուց ավելի, ես նայում եմ շուրջս, հայ հասարակության մեջ որևէ էական փոփոխություն նկատելի չէ։ Սա նշանակում է, որ ինքնապահպանական բնազդը դառնում է գոյաբանական ինքնաոչնչացման սպառնալիք։ Մենք այստեղ ենք, որպեսզի դա թույլ չտանք։

Վարդան Այվազյան, *ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, դոցենտ*

-Երբ մենք չափում ենք սահմանադրականությունը տնտեսագիտական տեսանկյունից, ապա այն չպետք է դիտարկենք միայն տեխնիկական հարթության մեջ։ Պարոն Դանիելյանի բերած օրինակը Սահմանադրության 2-րդ հոդվածի վերաբերյալ ցույց է տալիս, որ այն իրականությանը, մեղմ ասած, չի համապատասխանում։ Ես իսկապես կիսում եմ պարոն Դանիելյանի տեսակետը, որովհետև Սահմանադրությունը գեղեցիկ բառախաղերի ամբողջություն չէ, Սահմանադրությունը բարդ, բազմաշերտ համակարգ է, որը ներառում է նաև անվտանգության խնդիրը։ 44-օրյա պատերազմը վեր հանեց այն հիմնապատճառները, որոնք հանգեցրին մեր անվտանգության համակարգի խաթարմանը։ Երբ խոսում ենք սահմանադրական համակարգի մասին, պետք է նշել, որ դա բաղկացած է հետևյալ փոխկապակցված ենթահամակարգերից՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ազգային ինքնանույնականացման և հոգևոր-մշակութային։ Հռետորական հարց բոլորիս՝ ո՞վ և/կամ ո՞ր պետական մարմինն է, որ պետք է սահմանի անվտանգությունը, ո՞վ պետք է որոշի անվտանգությունը, ո՞վ պետք է տա դրա չափանիշները։ Ցավոք, այս հարցերի պատասխանները բացակայում են։ Պարոն Դանիելյանն իր խոսքում նշեց, որ դա թողել են Անվտանգության խորհրդի կիսագրագետ որոշումներին, իհարկե, դա լուրջ չէ։ Սահմանադրության մեջ առաջին խնդիրը, որ ազդել է պետականության որակի, հետևաբար և՝ անվտանգության վրա, հայկական աշխարհի երևութաբանության բացակայությունն է. ո՞վ է հայը, ո՞րն է գլոբալ հայի սահմանադրական մոդելը, որ նորագույն ժամանակների աշխարհակարգի քաղաքակրթական ձևաչափով և իր օնտոլոգիական ու պատմական ծագումնաբանությամբ կարողացել է անցնել իր էթնոգենեզը հազարամյակներով ու դարերով՝ ձևավորվելով որպես բացա-

հայտ «homo armenicus» և համաշխարհային քաղաքակրթության ծագման և կայացման գործընթացի մասնակից և սուբյեկտ: Սակայն պետք է անկեղծորեն հարցնենք՝ արդյո՞ք մեզ որպես այդպիսին ընդունում է համաշխարհային հանրությունը: Երկրորդ խնդիրն այն է, որ մեզանում բացակայում են գաղափարախոսությունը, դրանից բխող համարժեք ինքնիշխան պետականության սահմանադրական մոդելը և դրա կայացման փաստացի ընթացքը, ինչպես նաև աշխարհի քաղաքական կառույցի ընթացիկ կոնֆիգուրացիայում իր հայեցակարգային, դոկտրինալ և ռազմավարական դիրքավորումը: Երրորդ հիմնախնդիրն ինքնանույնականացման բացակայությունն է, ինչպես նշեց տիկին Մինասյանը: Մենք չկարողացանք պաշտպանել և պահպանել հայ ժողովրդի հիմնարար արժեքները և ինքնատիպությունը, և, չնայած այդ ամենին, հայ ժողովուրդը կարողացավ պահպանել և անցկացնել Հայկական աշխարհի մշակութային կոդը անհավանական և աներևակայելի այնպիսի փորձությունների և ողբերգությունների միջով, ինչպիսին ցեղասպանությունն էր: Այսօր ենթագիտակցական մակարդակով ոչ մի հայ մարդ չի կարող ընդունել այն պարադիգմը, որում իրեն արգելված է հայ լինելն ու սեփական երկրում ապրելը (հատկապես արցախցիները): Սակայն առավել սարսափելի է մայր հայրենիքի կորուստը, որի պարագայում լիարժեք կրթված հայ մարդու մշակութային կոդի փոխարինումը չի դիտարկվում որպես դավաճանություն և ազգային ինքնության կորստի սպառնալիք, ինչն էլ իր հերթին հանգեցնում է պետականության իմաստի և առարկայի կորստին, քանի որ **homo armenicus-ը** սահուն կերպով վերածվում է փողոցային երթերի մասնակցի պարզունակ ձևաչափի, իսկ կառավարությունը լիազորություն է ստանում առանց որևէ պատասխանատվության կամայականորեն իրականացնելու իր գործառույթները, քանի որ դրանք իմաստավորված չեն: Այսօր Հայոց աշխարհի մտավոր վերլուծության բացակայության պայմաններում առաջացել է մեր երկրի ազգային ինքնության վակուում, որը ներառում է պետությունը, հասարակությունը, էլիտան, Սփյուռքը, միջազգային հարաբերությունները, դիվանագիտությունը, տնտեսությունը, լրատվական տարածքը և այլն: Արդյունքում հայ ազգային մտավոր ինքնուրույնության բարձրագույն սանդղակը կորցրել է իր կառավարման ունակությունը: Այժմ, առավել քան երբևէ, Հայկական աշխարհը հոգևոր վերագործարկման կարիք ունի: Դա այն է, ինչն ի զորու է բյուրեղացնել Հայաստանի մտավոր ներուժը, հայ ժողովրդին ինքնությունից տեղափոխել ինքնանույնականացում, իմաստավորել հայի որակի չափանիշները:

Սեմինարն ամփոփեց պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

«Բարձրացված հարցերը կդառնան մեր սեմինարների մանրակրկիտ քննարկումների առարկա, համոզված եմ՝ կունենանք պրոդուկտիվ վերջնարդյունքներ: Շատ կարևոր ու առանձնակի ուսումնասիրության

առարկա են ազգային անվտանգության, պետության կայացածության և սահմանադրականության փոխառնչությունները, որոնց վերաբերյալ ունենք առաջին հետազոտությունները: Հայտնի է, որ փողը չի ապահովում մեր հագուկապը, չի կերակրում ու տնավորում, քանի դեռ այն չենք ծախսում կամ ներդնում: Այդպես էլ անվտանգությունն այն ժամանակ է իր ամբողջ հասակով զգացնել տալիս ու արժևորվում, երբ մարդիկ ապրում են այն կորցնելու զգացումը: Եթե փողը գերող, անվերջ և փոփոխուն հանելուկ է, ապա անվտանգությունը հանելուկ չէ, այն հանրային բարիք է, որը պետք է ստեղծել, որով պետք է ապահովել հասարակության բարեկեցությունը»,-ասաց նա:

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ սահմանադրական տնտեսագիտության
գիտավերլուծական կենտրոն